

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ
JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 22

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2022

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Գրեկյան Երվանդ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Արաբ Փաշայան

ՍԱՌԻԴՅԱՆ ԱՐԱԲԻԱՆ ԵՎ «ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ». ԵՐԿԱԿԻ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....7-21

Գոռ Գևորգյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ (1981-2014 ԹԹ.).....22-34

Վահե Հակոբյան, Տաթևիկ Մկրտչյան, Հայկ Քոչարյան

ԹՎԻԹԵՐԻ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ 2020Թ. ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱԶՈՐԴԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ (2020-2021ԹԹ.).....35-49

Տաթևիկ Մկրտչյան

ԻՄԱՍ ԱԼԻԻ ՆԱՄԱԿԸ ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇԹԱՐԻՆ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՎԱԽՈՒԹՅԱՆ ՅՈՒՐՕՐԻՆԱԿ ՄԻ ՆՍՈՒՇ.....50-61

Աննա Անտոնյան

ՏԱԲԱԿԱԹ ԺԱՆՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ 9-ՐԴ ԴԱՐԻ ԱՐԱԲԱՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ.....62-75

Սյարտակ Բաղդասարյան

2005 Թ.-Ի ԻՐԱԶՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐԸ.....76-94

Թյուրքագիտություն

Լուսինե Խաչատրյան, Անուշիկ Մարտիրոսյան, Ալեքսանդր Մաֆայան

ԹՈՒՐԻՔԵՐԵՆԻ ÜZERE ԵՎ DİYE ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐԸ.....95-109

Մամլեղ Ռանագրան

ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐ «ՔՅՈՈՕՂԼԻ»

ԷՊՈՍԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՏԱՐՔԵՐԱԿՆԵՐՈՒՄ.....110-116

Թանարա Աղանայրան

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ

ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 1965-1969 ԹԹ.....117-131

Այբինա Մուրադյան

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ

ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՆ ՈՒ

ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ

ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....132-152

Իրանագիտություն

Արփինե Առուշանյան

ՀՈԳՈՒ ՎԵՐԱՄԱՐՄՆԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ

ԾԱՅՐԱՀԵՂ ԾԻԱՅԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ.....153-167

Լիանա Պետրոսյան

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՈՍՔԻ ԱԶՏՈՒԹՅՈՒՆԸ ԻԻՀ-

ՈՒՄ Մ. ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԾՐՋԱՆՈՒՄ

(2005-2013թ.թ.).....168-182

*Ժաննա Վարդանյան **

ԻՐԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՐՐՈՐԴ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՎ ՀԵՏՈ.....183-195

Աշխեն Հովսեփյան

ՀԱՅ-ՀՆԴԿԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.....196-204

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Արտյոմ Տոնոյան

ՀՈՎԻՏԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ, ԱՔԵՆԵՆՅԱՆ ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՅԱԿԱՆ

ՔԱԺԱՆՈՒՄԸ, «Էդրոսադո» հրատ.,

Հայաստանի Հանրապետություն, Գյումրի, 2021, 456 էջ:.....205-211

CONTENT

Arabic Studies

Araks Pashayan

SAUDI ARABIA AND THE «ARAB SPRING». THE POLICY OF
DOUBLE STANDARDS.....7-21

Gor Gevorgyan

TRANSFORMATION OF EGYPT`S ARAB POLICY:
OPPORTUNITIES AND CHALLENGES (1981-2014) 22-34

Vahe Hakobyan, Tatevik Mkrtchyan, Hayk Kocharyan

DISCUSSION OF THE MAIN DISCOURSES OF THE 2020 44-DAY
ARTSAKH WAR AND THE SUBSEQUENT PERIOD IN
THE ARABIC-LANGUAGE TWITTER (2020-2021).....35-49

Tatev Mkrtchyan

IMAM ALI'S LETTER TO MALIK AL-ASHTAR AS A MODEL OF
JUST GOVERNANCE/RULERSHIP, RELIGIOUS
RIGHTEOUSNESS AND PIETY50-61

Anna Antonyan

THE FORMATION OF THE ṬABAQĀT GENRE IN THE
9TH CENTURY ARAB-MUSLIM WRITTEN CULTURE 62-75

Spartak Baghdasaryan

THE 2005 IRAQI CONSTITUTION AND THE FORMATION
OF A NEW SYSTEM OF GOVERNMENT..... 76-94

Turkic Studies

Lusine Khachatryan, Anushik Martirosyan, Alexander Safaryan

ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED
WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH
LANGUAGE AND THEIR COLLOCATIONS
IN THE ARMENIAN LANGUAGE.....95-109

Samvel Ramazyan
NEWLY DISCOVERED ARMENIAN PERSONAGES IN
THE TURKISH VERSIONS OF THE EPIC “KOROGLU” 110-116

Tamara Aghamalyan
IDEOLOGICAL BASIS OF THE REPUBLICAN PEASANTS’
NATION PARTY 1965-1969 117-131

Albina Muradyan
PUBLIC PERCEPTIONS AND MANIFESTATIONS OF RELIGIOUS
AND TRADITIONAL BELIEFS DURING
THE CORONAVIRUS PANDEMIC IN TURKEY 132-152

Iranian Studies

Arpine Arushanyan
THE IDEA OF THE TRANSMIGRATION OF SOULS
IN EXTREME SHIA SECTS 153-167

Liana Petrosyan
HUMAN RIGHTS AND FREEDOM OF SPEECH IN IRI DURING
M. AHMADINEJAD'S PRESIDENCY (2005-2013) 168-182

Zhanna Vardanyan
IRAN'S POSITION DURING AND AFTER
THE THIRD ARTSAKH WAR 183-195

Ashkhen Hovsepyan
ARMENIAN-INDIAN RELATIONS. HISTORICAL
OVERVIEW 196-204

BOOK REVIEW

Artyom Tonoyan
*Hovhannes Khorikyan, The Administrative Divisions of Achaemenid
Iran, “Eldorado” publisher, RA, Gyumri, 2021, 456 p: 205-211*

Լուսինե Խաչատրյան¹
Անուշիկ Մարտիրոսյան²
Ալեքսանդր Սաֆարյան³

**ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԸՅԵՐԵ ԵՎ ԸԻՅԵ ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ
ԿԱԶՄՎԱԾ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ
ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՄԱԿԱՆԴՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

Բանալի բառեր՝ üzere, diye, թուրքերեն, հետադրություն, կառույց, գործառույթ, բառակապակցություն, անորոշ դերբայ

Երևանի պետական համալսարանում թուրքերենը դասավանդվել է 1943 թ.-ից, ինչի նախաձեռնողն ու կազմակերպիչն է եղել մեծանուն արևելագետ ու հայագետ Հրաչյա Աճառյանը⁴: Ավելի քան կես դար հայ ուսանողներին թուրքերենի դասավանդման համար օգտագործվել են առավելապես ռուսերեն դասագրքեր, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ, բառարաններ՝ ստեղծված նախկին ԽՍՀՄ թյուրքագիտական առաջատար կենտրոններում⁵: ԵՊՀ զինվորական և արևելյան

¹ Խաչատրյան Լուսինե - ք.գ.թ., ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ, թյուրքագիտության ամբիոն, ասիստենտ, l.khachtryan@ysu.am

² Մարտիրոսյան Անուշիկ - ք.գ.թ., ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ, թյուրքագիտության ամբիոն, ասիստենտ, anushik.martirosyan@ysu.am

³ Սաֆարյան Ալեքսանդր – ք.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ, թյուրքագիտության ամբիոնի վարիչ, alexander-safaryan@ysu.am

⁴ Մանրաման տե՛ս Սաֆարյան Ա., Գալշոյան Ս., Հայ ուսանողներին թուրքերենի դասավանդման որոշ առանձնահատկությունների մասին, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), 13-րդ հատոր, ԵՊՀ հրատ., Երևան, 2017, էջ 416-435:

⁵ 1970-1980 թթ. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արարական և թուրքական բանասիրության ամբիոնի (հետագայում վերակազմավորվել է թուրքագիտության, այնուհետև թյուրքագիտության ամբիոնի) ուսանողներին առավելապես թարգմանաբար ներկայացվել է հետևյալ գրքերում ամփոփված տեղեկատվությունը Айларов М., Учебник турецкого языка (под ред.: В. Гордлевского), Москва, 1954,

բանասիրության ամբիոնների համագործակցության արդյունքում ստեղծվել է թուրքերենի «Լրագրական նյութերի թարգմանության ձեռնարկ-քրեստոմատիա (թուրքերեն լեզու)»՝ բնագրերի և համապատասխան եզրերի՝ ռուսերեն և հայերեն զուգահեռ թարգմանությունների ներկայացմամբ⁶: Ստեղծվել է նաև ընթերցարան, որն ավելի քան երկու տասնամյակ ծառայել է թուրքագետ-ուսանողներին⁷:

Թե՛ խորհրդային, թե՛ անկախության տարիներին հայաստանյան թուրքագետները՝ թուրքերենի դասավանդման գործընթացում օգտագործել են առավել հեղինակավոր թուրք լեզվաբանների հրատարակած (հատկապես արտասահմանցիներին թուրքերենի դասավանդման համար նախատեսված)⁸ դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, մենագրություններն ու հոդվածները:

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո սրությամբ հառնեց հայ արևելագետ-ուսանողների համար արևելյան լեզուների՝ մայրենի և պետական լեզվով դասավանդման գործընթացին ծառայող գրականության ստեղծման հիմնահարցը: ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի դասախոսների ջանքերով ստեղծվեց թուրքերենի՝ հայաստանյան իրականության մեջ առաջին դասագիրքը, որն արդեն իսկ ունեցել է յոթ հրատարակություն⁹: Վերոհիշյալ

Иванов С., Курс турецкой грамматики. Часть 1. Грамматические категории имени существительного, Ленинград, 1975, Часть 2. Грамматические категории глагола, Ленинград, 1977, Кононов А., Грамматика современного турецкого литературного языка, Ленинград, 1956.

⁶Կազմեցին՝ Մարտիրոսյան Հ., Ռազուշին Ա., խմբ.՝ Ռազուշին Ա., Մաս երկրորդ, Երևան, 1967:

⁷Մինասյան Ա., Թուրքերենի ընթերցարան (առաջին և երկրորդ կուրսերի համար, խմբ.՝ Ամիրյան Խ.), Երևան, 1986:

⁸ Մասնավորապես տե՛ս Yabancılarla Türkçe Öğretimi, El Kitabı, Grafiker Yayınları, Ankara, 2013, 583 s., Dilaçar A., Gramer: Tanımı, Adı, Kapsamı, Türleri, Yöntemi, Eğitimdeki Yeri ve Tarihiçesi, TDAY, 1971, Koç N., Yeni Dilbilgisi, İnkılâp, İstanbul, 1996, 742 s., Hengirmen M., Türkçe Öğreniyoruz, c. 1-3, Ankara, 1999.

⁹Տե՛ս Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Լորմազյոզյան Տ., Թուրքերենի դասագիրք, Գիրք Ա, Յոթերորդ լրամշակված հրատարակություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2021, 326

դասագիրքն օգտագործվում է ՀՀ բոլոր պետական և մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև այն դպրոցներում, որտեղ թուրքերեն է դասավանդվում. այսուհանդերձ այս դասագիրքը նախատեսված է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության բաժնի բակալավրիատի առաջին և երկրորդ կուրսի ուսումնական դասընթացը սպասարկելու համար, ուստի՝ ներկայումս առկա է դասագրքի՝ բակալավրիատի երրորդ և չորրորդ կուրսի ուսումնական գործընթացը սպասարկող երկրորդ հատորի շարադրման հրամայականը: Մեր սույն հոդվածը միտված է այդ

էջ: Հավելենք, որ անկախության տարիներին ԵՊՀ և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում աշխատող թուրքագետների և օսմանագետների կողմից զգալի աշխատանք է կատարվել դասագրքերի, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկների ստեղծման ուղղությամբ. մասնավորապես հրատարակվել են հետևյալ դասագրքերը. Մովսիսյան Լ., Ադրբեջաներենի դասագիրք, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 204 էջ, Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ. և ուրիշներ, Թուրքիայի Հանրապետության պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2014, 396 էջ, Մելքոնյան Ռ., Թուրքական գրականության պատմություն (XX դարի 20-ական թթ. XXI դարի սկիզբ), ՎՄՎ-ՊԻԻՆՏ, Երևան, 2017, 264 էջ, Սարգսյան Ա., Սաֆարյան Ա., Սահակյան Լ., Օսմաներենի դասագիրք, ԵՊՀ հրատ, Երևան, 2016, 324 էջ: Հրատարակվել են նաև հոդվածներ ու տարբեր գիտաժողովների նյութեր՝ նվիրված հայ ուսանողներին թուրքական լեզուների դասավանդման պատմությանը և առանձնահատկություններին: Մասնավորապես տե՛ս Симонян А., Сафарян А., Об изучении вопросов тюркской филологии в Армении, Актуальные вопросы отечественной и зарубежной иранистики международная научно-практическая конференция, Казань, 2015, стр. 244-249, Мелконян Р., Сафарян А., Погосян Н., О преподавании турецкого языка в Ереванском государственном университете, Язык и культура в эпоху интеграции научного знания и профессионализации образования, Материалы международной конференции, Пятигорск, 2017, стр. 294-298, Սաֆարյան Ա., Մելքոնյան Ռ., Հայ ուսանողներին թուրքերենի հայցական հոլովի ուսուցման առանձնահատկությունների մասին, Тезисы докладов международной научно-методической конференции “Проблемы романо-германской филологии: теория и методика преподавания иностранных языков”. Российско-Армянский (Славянский) Государственный университет, Ереван, 2006, стр. 72-73, Симонян А., Сафарян А., О преподавании тюркологических предметов в Армении, Тюркский мир и исламская цивилизация: проблемы языка, литературы, истории и религии, IX международная тюркологическая конференция, 2018, стр. 422-426, Սահակյան Լ., Սաֆարյան Ա., Սարգսյան Ա., Օսմաներենի դասավանդման սկզբունքները հայալեզու լսարանում, Ժամանակակից լեզվաբանությունը միջգիտակարգայնության լույսի ներքո, Միջազգային գիտաժողով-4, ԵՊՀ, Անգլերենի ուսումնասիրության հայկական սանցիալիս, Երևան, 2016, էջ 58-59:

խնդրի որոշ մեթոդական ասպեկտների լուսաբանմանը, համապատասխան թեմաների գիտամանկավարժական փորձաքննության ու քննարկման ծավալմանը, մասնավորապես թուրքերենի հետադրությունների, նրանցով կազմված կառույցների՝ հայկական լսարանում դասավանդման (հայերեն համարժեքների բացահայտման) առանձնահատկությունների արծարծմանը:

Վերոհիշյալ դասագրքի երկրորդ հատորում (հետևելով համապատասխան հաստատված ծրագրին¹⁰) մասնավորապես նախատեսվում է ընդլայնել թուրքերենի շաղկապների, կապերի, կապական բառերի և այլ խոսքի մասերի վերաբերյալ ուսանողներին ներկայացվող տեղեկատվությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԵՊՀ բազմամյա դոցենտ Քնարիկ Միրզոյանի կողմից արդեն իսկ հայաստանյան գիտական պարբերականներում հրատարակվել է թուրքերենի շաղկապների և հայ ուսանողին դրանց դասավանդման հիմնահարցերին նվիրված արժեքավոր հոդվածաշար¹¹, սույն հոդվածում

¹⁰Տե՛ս Սաֆարյան Ա., Մելքոնյան Ռ., Միրզոյան Ք., Սահակյան Լ., Թուրքերենի ծրագիր, ԵՊՀ հրատ., Երևան, 2010: Հավելենք, որ ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնում նախկինում զգալի աշխատանք է կատարվել նաև թուրքերենի դերբայների ուսումնասիրության բնագավառում: Մանավորապես տե՛ս Սաֆարյան Ա., Սահակյան Լ., Ամիրխանյան Լ., Ժամանակակից թուրքերենի դերբայների դասակարգման հիմնահարցի շուրջ, «Արևելագիտության հարցեր» (խմբ.՝ Գ. Մելիքյան), հատոր VI, Երևան, 2006, Սաֆարյան Ա., Սահակյան Լ., Ամիրխանյան Լ., Ժամանակակից թուրքերենի մակրայական դերբայների իմաստաբերականական յուրահատկությունների մասին, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հատոր VII (խմբ.՝ Ռ. Սաֆրասոյան), Երևան, 2011: Հրատարակության է նախապատրաստվում դոցենտ Լ. Սահակյանի համապատասխան բուհական դասագիրքը՝ նախատեսված մագիստրատուրայի համար:

¹¹Մանրամասն տե՛ս և հմնտ. Միրզոյան Ք., Ժամանակակից թուրքերենի հետադրությունների կառուցվածքային և իմաստաբանական առանձնահատկությունները, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա Արևելագիտության ինստիտուտ», Երևան, 2008 թ., էջ 210-215, Ժամանակակից թուրքերենի շաղկապների ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների մասին, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան 2008 թ., էջ 52-56, Ժամանակակից

կշեշտադրենք *üzere* և *diye* հետադրություններով կազմված բառակապակցությունների և դրանց հայերեն համարժեքների դասավանդման առանձնահատկությունները՝ ծրագրելով առանձին հոդվածներով մասնագետների դատին ներկայացնել նաև այլ հետադրությունների հայերեն համարժեքները քննարկելուն նպատակաուղղված մեր առաջարկները:

Թուրքերեն նախադասության մեջ *üzere* բառը հետադրությանը և մակբային բնորոշ շարահյուսական գործառույթ է իրականացնում. այն այլևս ձևաբանական փոփոխությունների չի ենթարկվում, քարացած է և ինքնուրույն իմաստաբանական արժեք չունի: Ըստ թուրք լեզվաբան Ն. Հաջըլեմինօղլուի՝ բառն իր *özre / özere / üzre / üzere* տարբերակներով կազմված է *üze/öze* (վերև) + *re < ara* (տեղ/վայր) բաղադրիչներից. այն և՛ որպես տեղի մակբայ, և՛ որպես հետադրություն (*çekim edati*) հանդիպում է դեռևս խորեզմյան դարաշրջանի թյուրքերեն ձեռագրերում¹²: Ն. Հաջըլեմինօղլուն նաև հավելում է, որ «արևմտյան թյուրքերենում» (իմա.՝ օսմանյան և հանրապետական շրջանի թուրքերենում) *üzre/üzere* բառն ուղղական հոլովի հետ կիրառվելիս, հանդես է գալիս տեղի և ձևի մակբայի, իսկ գոյականներին՝ պատկանելիության ածանցների, դերանուններին՝ սեռական հոլովի ածանցների ավելացմամբ՝ «մասին, վերաբերյալ, համար» (*hakkında, dair, için*), հետադրությունների իմաստային հարաբերություններով և ոճական արժեքով¹³:

Üzere հետադրությունը բայերի և գոյական անունների հետ տարբեր կոլոկացիաներ է կազմում, որոնք կփորձենք ներկայացնել

թուրքերենի շաղկապների կառուցվածքային և իմաստաբանական հատկանիշները, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ (VI) «ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա Արևելագիտության ինստիտուտ», Երևան, 2009, էջ 314-322:

¹²Մանրամասն տե՛ս և հմնտ. Hacıeminoğlu, N., Türk Dilinde Edatlar, MEB Yayınları, Ankara, 1992, s. 75-77.

¹³Hacıeminoğlu N., նույն տեղում:

ստորև: Այս հետադրությունն անորոշ դերբայի հետ կազմում է մակբայական դերբայ, որն արտահայտում է ամենամոտ ապագայում կատարվելիք գործողություն՝ ստանալով ներկա և անցյալ ժամանակի դիմորոշ վերջածանցներ՝ կազմելով բաղադրյալ ստորոգյալ (Օր.՝ Gitmek üzereyim. – Արդեն (ուր-որ է, հենց հիմա,) գնում եմ (խսկց.՝ գնալու «վրա» եմ): Acele edelim, güneş batmak üzere. – Շտապե՛նք, արևն արդեն/ուր-որ է մայր կմտնի: Vakit bitmek üzere. Biraz çabuk ol. – Ժամանակն արդեն ավարտվում է (Ուր-որ է կսպառվի). մի քիչ շտապի՛ր:): Կոլոկացիայի արտահայտած մոտալուտ ապագայի իմաստը շեշտելու համար երբեմն կարող են կիրառվել üzere (+ եղանակաժամանակային վերջածանցներ) + neredeyse (ուր-որ է/գրեթե), üzere (+ եղանակաժամանակային վերջածանցներ) + şimdi (այժմ/հիմա) բառակապակցությունները (Օր.՝ Kıskaçlığın çirkinliğini, öyle ince bir duyarlılıkla, öyle bir içtenlikle, öyle güzel anlatıyordun ki, fena halde duygulanmıştım, ağlamak üzereydim nerdeyse¹⁴ . – Այնքան նրբանկատորեն, այնքան անկեղծ ու այնպե՛ս լավ էր ներկայացնում նախանձի այլանդակ բնույթը, որ խիստ զգացվել էի, գրեթե արտասվում էի: Çünkü arkadaşım Nejat Harmancı, yatağımın kenarına oturmuş, yüzüme sevecen küçük tokatlar atarak, "Türkiye'nin, Balkanların ve Ortadoğunun en iyimser hastası kendine gelmek üzere şimdi" diyordu, beni kesip biçen meslektaşına¹⁵. – Քանի որ ընկերս՝ Նեջաթ Հարմանջըն, անկողնուս մի ծայրին նստած, դեմքիս սիրալիր ու թերևակի ապտակներ հասցնելով, ինձ վիրահատած գործընկերոջն ասում էր. «Թուրքիայի, Բալկանների և Միջին Արևելքի ամենալավատես հիվանդը հիմա, ուր-որ է ուշքի կգա»):

ՄԶԵՐԵ հետադրությունը կարող է կիրառվել նաև -ki ստորադասական շաղկապի հետ. (Օր.՝ Gitmek üzereydim ki mesajın

¹⁴Urgan M., Bir Dinozorun Anıları, Yapı Kredi Yayınları, İstanbul, 2018, s. 234.

¹⁵Urgan M., նույն տեղում, էջ 18:

geldi. - Արդէն պատրաստվում էի գնալ, երբ (որ) հաղորդագրությունդ եկավ)¹⁶:

-(i)ken ածանցի հետ կիրառվելիս՝ այս հետադրությունը ժամանակի մակրայական դերբայ է կազմում. (Օր.՝ Tam uyumak üzereyken telefon çaldi. – Արդէն (հենց այն է, ուր-որ է) քնում էր, երբ հեռախոսը զանգեց: Tam düşmek üzereyken bir el onu tutup yukarıya çekti.- Ուր-որ է ընկնում էր, երբ մի ձեռք նրան բռնելով վերև քաշեց):

Անորոշ դերբայի և üzere հետադրության կոլոկացիան նպատակային հարաբերություն է արտահայտում՝ դառնալով լին (համար) հետադրության (նույնաբնույթ) հոմանիշը (հայերեն կարելի է թարգմանել «որպեսզի» շաղկապի միջոցով)¹⁷: Ընդ որում՝ այս գործառույթով կառույցը շատ հաճախ նպատակ-պայման-ցանկություն է մեկտեղում. (Օր.՝ Sitemiz açılmamak üzere kapanmıştır. - Մեր կայքը փակվել է ընդմիջտ (խսկց.՝ որ այլևս երբեք չբացվի/ այլևս երբեք չբացվելու պայմանով) / Մեր կայքը փակվել է, որպեսզի այլևս չբացվի): Evi bir daha gelmemek üzere terk etti. – Տնից հեռացավ, որպեսզի այլևս չվերադառնա):

Անորոշ դերբայ + üzere համատեղ կիրառությունը նաև պատճառահետևանքային հարաբերություն է արտահայտում (կառույցը մատնանշում է իրեն հաջորդող (խոնարհված) բայի արտահայտած գործողության պատճառը՝ ձևավորելով ուրույն իմաստային կապ, որը նպատակահարմար է հնարավորինս հանգամանակից ներկայացնել ուսանողներին)¹⁸: (Օր.՝ İngiliz

¹⁶Սանրամասն տե՛ս Göksel A., Kerslake C., Turkish: A Comprehensive Grammar, Routledge, London and New York, 2005, 508p.

¹⁷Hengirmen M, Turkish Grammar For Foreign Students, Dumat, 2001, s. 92, Подлесная Ю., Палий Е., Турецкий Язык, Полный курс Грамматики, SkyHorse, Киев, 2020, стр. 279-280.

¹⁸Սանրամասն տե՛ս Hacıeminoğlu N., Türk Dilinde Edatlar, MEB Yayınları, Ankara, 1992, 336 s., Korkmaz Z., Türkiye Türkçesi Grameri, Şekil Bilgisi, Türk Dil Kurumu Yayınları, Ankara, 2009, s. 877-878, s. 1062, s. 1066, s. 1069.

edebiyatıyla ilgili bir doktora yapmak üzere Fransa'ya gitmem de saçma geldi bazı dostlarıma¹⁹.- Իմ որոշ բարեկամներին անհերթեթ թվաց, որ անգլիական գրականության վերաբերյալ թեկնածուականատենախոսություն գրելու համար Ֆրանսիա եմ գնում: Tercüme Bürosunun klasikleri arasında yayınlanmak üzere o kitabı çevirdiğimi duyunca, kızımıştı²⁰. – Բարկացել էր, երբ լսել էր այն մասին, որ Թարգմանչական գրասենյակի դասականների շարքում հրատարակվելու համար այդ գիրքն եմ թարգմանում):

Անորոշ դերբայ + üzere կառույցը նաև պայմանի հարաբերություն է արտահայտում, իսկ հայերեն թարգմանվում է «այն պայմանով, որ» բառերի և համապատասխան (հաջորդող կամ նախորդող) բառակապակցությունների միջոցով: (Օր.՝ Akşama geri getirmek üzere bu kitabı alabilirsiniz.- Այս գիրքը կարող եք վերցնել պայմանով, որ երեկոյան հետ վերադարձնեք (երեկոյան հետ վերադարձնելու պայմանով): Annem bir yandan evdeki kıymetli eşyaları satarken, bir yandan da mağazada beğendiği birkaç küçük antikayı, fiyatı maaşından kesilmek üzere, satın almıştı²¹. – ... Մայրս մի կողմից տանը եղած թանկարժեք իրերն էր վաճառել, մյուս կողմից՝ խանութում իր հավանած մի քանի հնարժեք փոքր իրեր էր գնել այն պայմանով, որ դրանց գինն իր աշխատավարձից էր գանձվելու (խսկց.՝ կտրվելու):

Ӛzere հետադրությունը başlamak և başta olmak բայերի հետ կիրառվելիս՝ թվարկման հարաբերություն է արտահայտում: Ընդ որում՝ այս կառույցով շեշտվում է թվարկման շղթայի բաղադրիչների առաջնայնությունը. (Օր.՝ Mutasarrıfından, belediye reisinden başlamak üzere bütün hükümet memurları, jandarma, polis, bütün belli başlı müderrisler, şeyhler, mühim tüccarlar ve esnaf yenilik

¹⁹Urgan M., նշվ. աշխ., էջ 188:

²⁰Urgan M., նույն տեղում, էջ 200:

²¹Urgan M., նույն տեղում, էջ 110:

tarafтарыdı²²). – Գավառապետից, համայնքապետից սկսած՝ բոլոր պետական պաշտոնյաները, ժանդարմերիան, ոստիկանությունը, բոլոր ճանաչված մանկավարժները, շեյխերը, կարևոր վաճառականներն ու արհեստավորները նորարարության կոդմնակիցներ էին: Başta başbakan yardımcısı olmak üzere şehrimize bir heyet gelecek. – Փոխվարչապետի գլխավորությամբ մեր քաղաք մի պատվիրակություն է գալու):

Olmak բայի հետ üzere հետադրությունն ամբողջի մեջ մասնավորը շեշտելու գործառությամբ հստակեցման, պարզաբանման, իսկ որոշ դեպքերում նաև քանակական կամ բաղդատական հարաբերություն է արտահայտում՝ գործածվելով իբրև մասնակի բացահայտիչ: Ընդ որում՝ քանակ կամ համեմատություն ցույց տվող բառը երրորդ դեմքի եզակի թվի պատկանելիության ածանց է ստանում: (Օր.՝ İkiisi Almanya'dan, kalani İtalya'dan olmak üzere 18 çınar ağacı getirdik. – 18 սուի բերեցինք՝ երկուսը Գերմանիայից, մնացածը՝ Իտալիայից: Bizim koğuşumuzda bazısı ağır olmak üzere on beşe kadar hasta vardı. – Մեր հիվանդասենյակում տասնհինգ հիվանդ կար՝ ոմանք ծանր վիճակում:):

Հարկ է նշել նաև, որ երբեմն olmak բայի հետ üzere հետադրությունը ձևի պարագա երկրորդական նախադասություն է կազմում՝ արտահայտելով "olarak" մակբայական դերբայով կազմվող կառույցին համարժեք իմաստ: (Օր.՝ Şahin Efendi, bir lâtıfe olmak üzere: -Bizim medrese mantığında bir kaide vardır: “Bir şeyya hacerdir, ya lâhacerdir” derler...²³. – Շահին էֆենդին, իբրև կատակասում էր. «Մեր մեղրեսեական տրամաբանությամբ մի սկզբունք կա՝ «Մի բանը կամ արգելված է, կամ ոչ արգելված»²⁴):

²²Tahir K., Yorgun Savaşçı, Tekin Yayınları İstanbul, 1997, s. 21.

²³Tahir K., նույն տեղում, էջ 36:

²⁴Конов А., Грамматика турецкого языка, Изд. Академии Наук СССР, Москва, 1941, стр. 193.

Ӛzere հետադրությունը -dik և -acak վերջածանցներով կազմված գործողության անունների հետ կազմում է հիմունքի պարագա երկրորդական նախադասություն՝ դառնալով gibi (նման, պես) հետադրությամբ կառույցին համարժեք, իսկ հայերեն է թարգմանվում «համաձայն, ինչպես, ըստ, հիման վրա» կապերի միջոցով (Օր.՝ Hocamızın da söylediği üzere bu konu hakkında fazla çalışılmamış. – Ինչպես նշել է նաև մեր ուսուցիչը՝ այս թեման շատ ուսումնասիրված չէր: Biraz sonra müdürün daha detaylı açıklayacağı üzere araştırma 2500 denek üzerinde yapılmıştır. – Ինչպես ավելի ուշ մանրամասն կպարզաբանի տնօրենը (համաձայն/ըստ տնօրենի պարզաբանման, տնօրենի պարզաբանման հիման վրա)՝ ուսումնասիրությունն իրականացվել է 2500 փորձաքննվածների տվյալների հիման վրա:)

Ӛzere հետադրությունը գոյական անունների հետ երբեմն շարունակականություն, անփոփոխություն արտահայտելու գործառությամբ է հանդես գալիս՝ հասկապես hal, tarz, minval, moda, usül (վիճակ, ձև, տեսք, միջոց) բառերի հետ կիրառվելիս (Օր.՝ Bir kaza neticesinde bina esaslı surette sarsılmış, kısmen yıkılmıştı. Hali üzere bırakılırsa büsbütün yıkılmak tehlikesi vardı²⁵ – Վթարի արդյունքում շենքը հիմնովին (հիմքից) ցնցվել էր, մասամբ՝ ավերվել: Եթե թողնվեր այդ վիճակում, առկա էր ամբողջովին ավերվելու վտանգ: Biz tabii eski usül üzere yaptık²⁶ - Մենք, իհարկե, հին ձևով արեցինք:)

Diye հետադրությունն ամենալայն կիրառությամբ հաջորդում է ուրիշի ուղղակի խոսքին՝ նախորդելով sormak (հարցնել), cevap vermek (պատասխանել), düşünmek (մտածել), bağırmaq (բղավել), mırıldanmak (փնթփնթալ, մոթմոթալ) բայերին, և հայերեն

²⁵Tahir K., նշվ. աշխ., էջ 30:

²⁶Taner H., Şişhane'ye Yağmur Yağıyordu / Ayışımında “Çalışkur”, Bilgi Yayınevi, Ankara, 2007, s. 108.

թարգմանվում «ասելով» բայաձևի միջոցով (Օր.՝ «Akşama gelecek misin?» diye sordu annem bana. - Մայրս հարցրեց ինձ. «Երեկոյան կգա՞ս» [ասելով]²⁷: Ben de ona «Hasta değilim, sadece biraz yorgunum» diye cevap verdim. - Ես էլ նրան պատասխանեցի. «Հիվանդ չեմ, պարզապես մի քիչ հոգնած եմ»): Պակաս կարևոր չէ նաև հայ ուսանողներին այս հետադրության մեկ այլ՝ ստորադաս (երկրորդական) նախադասություն կազմելու գործառնությունների ներկայացումը: Այս պարագայում այն արտահայտում է պատճառահետևանքային հարաբերություն՝ հայերեն թարգմանվելով «պատճառով, համար» կապերի և «քանի որ» ստորադասական շաղկապի օգնությամբ (Օր.՝ Hasta diye doktora çağırıldık. - Բժիշկ կանչեցինք, քանի որ նա հիվանդ էր: /Մտածելով, որ [խսկց.՝ ասելով, որ հիվանդ է] նա հիվանդ է, բժիշկ կանչեցինք: Giderken alırsınız diye zarfı oraya koymuştum. - Մտածելով [խսկց.՝ ասելով], որ գնալիս կվերցնեք, ծրարն այնտեղ դրեցի: Mektup yazmıyor diye ailesi kızıyor. - Նրա ընտանիքը բարկանում է այն պատճառով, որ նա նամակ չի գրում: Annesi onu öpmeden gitti diye ağlıyor. - Նա լալիս է, քանի որ մայրը գնաց՝ առանց նրան համբուրելու.):

Diye հետադրությամբ կառույցը կարող է արտահայտել նաև նպատակ, մտադրություն, երբ նրան նախորդող բայը խոնարհված է կա՛մ սահմանական եղանակի ապառնի ժամանակով, կա՛մ ըղձական եղանակով, կա՛մ «հրամայական եղանակի» (Emir kipi) երրորդ դեմքով²⁸ (Օր.՝ Sen dil öğreneceksin diye biz ne zorluklar çektik. –Մենք ինչպիսի՞ դժվարություններ կրեցինք, որպեսզի դու լեզու սովորես [խսկց.՝ ասելով, որ դու լեզու ես սովորելու]: Kışın üşümeylim diye kalorifer aldık. - Որպեսզի ձմռանը չմրսենք,

²⁷Van Shaaik G., The Oxford Turkish Grammar, Oxford, UK, 2020, pp. 379-380.

²⁸Гузев В., Теоретическая грамматика турецкого языка, С. Петербург, Гос. университет, 2015, стр. 297.

օղաջեռուցիչ գնեցինք: Küçük bir elektrik ışığı bu satılık saadetin başucunda, sanki düşünülen ile yaşanılanın arasındaki fark iyice görülsün diye yanyordu. – Փոքրիկ մի էլեկտրական լույս էր վառվում, որ կարծես լավ երևա այս ծախու երջանկության գագաթին մտացածինի և իրականի միջև եղած տարբերությունը:):

Հատկանշական է, որ diye հետադրությունն իմաստառճային և ձևաբանական ուրույն արժեք է ձեռք բերում konuşmak (խոսել) և korkmak (վախենալ) բայերի հետ կիրառվելիս. հանդես գալով konuşmak (խոսել) բայի հետ՝ ցույց է տալիս գործողություն, որն արդեն իսկ համաձայնեցված է երկու և ավելի մարդկանց միջև (Օր.՝ Herkes bir yemek yapıp getirsin diye konuşmuştuk. – Պայմանավորվել էինք, որ ամեն մեկը մի ուտեստ պատրաստեր և բերեր), իսկ korkmak բայի հետ կիրառվելիս՝ diye հետադրությանը նախորդող բայը խոնարհվում է՝ ստանալով պայմանական եղանակի վերջածանց (Օր.՝ Meral, Turgut onu Selim’le görürse diye korkuyordu. – Մերալը վախենում էր, որ Թուրգուլը նրան Սելիմի հետ կտեսներ):):

Ne հարցական դերանվան հետ կիրառվելիս՝ այս հետադրությունն իմաստային առումով համարժեք է դառնում neden, niçin (ինչո՞ւ) հարցական դերանուններիին (Օր.՝ Ne diye buralarda yalnız başına oturuyorsun da bizimle birlikte olmak istemiyorsun? – Ինչո՞ւ ես (իսկզ.՝ ի՞նչ ես ասում, որ ...) այստեղ միայնակ նստում ու մեզ հետ (միասին) լինել չես ուզում: Ne diye hiç kimseye sormadan kendi başına hareket ediyorsun? – Ինչո՞ւ ես առանց որևէ մեկին հարցնելու, ինքնազուխ գործում):):

Diye հետադրությունը կարող է հանդես գալ հայերենին համարժեք «որպես», «իբրև», ինչպես նաև թուրքերենի "gibi" (նման, պես) կապով կառույցի իմաստային գործառույթով (Օր.՝ Sen Davut’u çoban diye tanırdın. – Դու Դավութին որպես հովիվ էիր ճանաչում: Şu evde bir köle diye yaşıyordun. – Այդ տանն իբրև ստրուկ

(ստրուկի պես/նման) էր ապրում (Ապրում էր, կարծես, ստրուկ լիներ): Mutlu bir aile babası diye bildiğimiz Asım Bey, meğer bir gösteriş budalası imiş. - Պարոն Ասւմը, ում որպես երջանիկ ընտանիքի հայր գիտեինք, պարզվում է՝ ցուցամուկ հիմարի մեկն է եղել:)

Նկատենք նաև, որ diye հետադրությունն այլ իմաստ է դրսևորում անձնանունների հետ կիրառվելիս՝ հայերեն թարգմանվելով «անվամբ, մականվամբ, կոչված» բառերի միջոցով (Օր.՝ Apo diye bir arkadaşım var. - Ափո անվամբ մի ընկեր ունեմ: Mehmet diye bir oğlu daha var. - Մեհմեդ անունով մի տղա ևս ունի: Yakup Kadri Karaosmanoğlu o yıllarda "Zoraki Diplomat" diye bir roman daha yazmıştı. - Յաքուր Բարթի Բարասումանօղլուն այդ տարիներին ևս մի վեպ էր գրել՝ «Դիվանագետ՝ հակառակ սեփական կամքին» անվանմամբ:):

Հաջորդելով գոյական անուններին՝ diye հետադրությունը երբեմն նաև դրսևորում է «փոխարեն - սխալմամբ» (խսկց.՝ «տեղը») իմաստները (Օր.՝ Dikiş iğnesi diye toplu iğne getirmiş. - Կարելու ասեղի փոխարեն (խսկց.՝ տեղը) սխալմամբ գնդասեղ էր բերել: Kitapçı, kardeşim diye benimle konuştu. - Գրավաճառը եղբորս փոխարեն սխալմամբ ինձ հետ խոսեց:):

Diye հետադրությունը şıp, zık, pat (կիրառվում են անսպասելիորեն տեղի ունեցած իրադարձությունները նկարագրելու դեպքերում), ձայնարկությունների հետ կազմում է հարադիր բարդություն (հայերեն թարգմանաբար՝ «անսպասելի, հանկարծակի»), իսկ kirp (կիրառվում է գործողության՝ միանգամից դադարելու իմաստն արտահայտելիս), vık (կիրառվում է դժվար, ճնշման տակ դուրս եկած ձայնն արտահայտելու համար), zıng (կիրառվում է ընկնող իրերի ձայնն արտահայտելու համար) ձայնարկությունների հետ կիրառվելիս այս հետադրությունն

ավելի է շեշտում դրանց արտահայտած իմաստը²⁹ (Օր.՝ Pat diye içeri girdi. – Հանկարծակի ներս մտավ: Ağlaması kirp diye kesildi.- Լացը միանգամից/իսկույն կտրվեց: Düşer düşmez vık diye canı çıktı.- Ընկնելուն պես հոգին դուրս եկավ:):

Այսպիսով, սույն հոդվածում, անդրադառնալով հայալեզու ուսանողներին թուրքերենի մատուցման գործընթացում քերականական թարգմանության մեթոդով պայմանավորված որոշակի դժվարություններին և առանձնահատկություններին, կարևորվում է վերլուծված՝ թուրքերենի üzere և diye հետադրություններով կազմված բառակապակցությունների և դրանց համարժեք հայերեն կառույցների՝ հնարավորինս համակոդմանի (տարբեր «ալգորիթմերով» կամ «կոնֆիգուրացիաներով», ներառյալ՝ համապատասխան հայերեն ժողովրդախոսակցական տարբերակներով) ներկայացնելու մեթոդական հրամայականը:

**ОБ ОСОБЕННОСТЯХ ПРЕПОДАВАНИЯ
СЛОВОСЧИТАНИЙ, ОБРАЗОВАННЫХ С ПОСЛЕЛОГАМИ
ӮZERE И DİYE ТУРЕЦКОГО ЯЗЫКА И ИХ КОЛОКАЦИЙ В
АРМЯНСКОМ ЯЗЫКЕ**

*Лусине Хачатрян
Анушик Мартиросян
Александр Сафарян
(Резюме)*

В методической статье рассматриваются вопросы, связанные с функциональными особенностями конструкций, образованных с послелогоми üzere и diye, “алгоритмов” их переводов на армянский язык с целью усовершенствования процесса преподавания

²⁹Մանրամասն տե՛ս Karademir F., Türkiye Türkçesi Ağızlarında Birden(Bire)lik / Anzırlık Bildiren Sözcükler, Mustafa Kemal Üniversitesi Dergisi, Cilt 8, Sayı 16, Hatay, 2011, s. 410-411.

армяноязычным студентам соответствующего курса современного турецкого языка. В статье акцентируется императив представления разных “конфигураций” переводов (в том числе – разговорных форм) во время лекций и практических занятий в соответствии с программой бакалавриата и апробации вузовских учебников турецкого языка. Анализируются примеры переводов словосочетаний и предложений из произведений современных турецких прозаиков и публикаций СМИ.

**ON THE PECULIARITIES OF TEACHING TERMS FORMED
WITH PREPOSITIONS ÜZERE AND DİYE OF THE TURKISH
LANGUAGE AND THEIR COLLOCATIONS IN THE ARMENIAN
LANGUAGE**

Lusine Khachatryan

Anushik Martirosyan

Alexander Safaryan

(Summary)

This article discusses the issues related to the functional features of constructions formed with the prepositions üzere and diye and the "algorithms" of their translations into Armenian in order to improve the process of teaching Armenian-speaking students. The article highlights the imperative of presenting various "configurations" of translations (including collocations) during the lectures and practical classes in accordance with the undergraduate program and the approbation of the university textbooks of the Turkish language. The examples of translations of word combinations and sentences are analyzed from the works of modern Turkish prose writers and media publications as well.